«ՕՐԵՆՔԸ ԲԱՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ Է...»

ՊԱՇՏՈՆԻ ԿՈՉՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՀԱՆԴԻՍԱՎՈՐԱԲԱՐ ԵՐԴՎԵՑԻՆ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ 123 ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ավարտվեց դատական բարեփոխումների հերթական փուլը, որն իր տեսակի մեջ առայժմ եզակի էր:

Նոր նշանակված 123 դատավորները, համաձայն դատավորների կարգավիճակի մասին օրենքի, հունվարի 12-ին հանդիսավորաբար երդվեցին ՀՀ նախագահի, Սահմանադրական Դատարանի նախագահի, Վճռաբեկ դատարանի նախագահի, կառավարության այլ անդամների, ինչպես նաև մեծաթիվ հրավիրյալների ներկայությամբ:

Ներկաների թվում էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Ցուրաքանչյուր երդմնատու երդվում էր ոչ թե Ավետարանի կամ Սուրբ Գրքի վրա ձեռքը դնելով, ինչպես դա արվում է շատ քաղաքակիրթ երկրներում, այլ պարզապես ընթերցում էր հպտուկ այդ նպատակով գրված հետևյալ տեքստը. *«Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը, երդվում եմ արդարադատությունն իրականացնելիս ենթարկվել միայն Սահմանադրությանն ու օրենքներին, լինել անաչառ և սկզբունքային, արդարացի և մարդասեր, բարձր պահել պետության և դատարանի հեղինակությունը»*:

Թե ինչպե՞ս են մեր նորոգ ընտրյալ դատավորները իրականացնելու արդար դատելու իրենց առաքելությունը և թե ինչպե՞ս են այն հարաբերելու Աստվածաշնչյան «Մի՛ դատիր, որ չդատվես», «Սուտ մի՛ երդվիր» պատվիրանների հետ, ցույց կտա ժամանակը: Իսկ հունվարի 12-ին նրանք, երդման հանդիսավոր արարողակարգից հետո, ուղղակի լսեցին բարեմաղթանքի խոսքեր և գեղեցիկ ցանկություններ:

Նրանց նման բարեմաղթանքներ առաջինը հղեց Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ապա դատավորների երդման արարողության և դատական նորացված ինստիտուտի նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտեց նաև Փոխանորդ Սրբազան Հայրը՝ առանձնակի շեշտելով, որ այդ արարողության մեջ ամփոփված են դատական համակարգի հանդեպ հասարակության ունեցած սպասելիքներն ու ակնկալիքները:

«Տիկնայք և պարոնայք,

Հանուն Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ուրախ ենք մեր ողջույնն ու օրհնությունը փոխանցելու ձեզ՝ Հայաստանի Հանրապետության նորանշանակ դատավորների երդման հանդիսավոր արարողության առիթով:

«Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին» (ՍՂՄ. ՁԴ 11):

Աստվածաշնչյան այս խոսքերը, կարծում եմ, տեղին և համահունչ են

հանդիսավոր այս պահին՝ դատավորների երդման հանդիսավոր այս արարողությանը: Հայ իրականության մեջ անդրանիկ այս արարողությունը ևս սեկ կարևոր քայլ է հայոց պետականության ներքին կյանքի օրինականության ամրապնդմանը: Երդման հանդիսավորության մեջ ամփոփված են մեր ամենաերդումները՝ առողջացնելու հասարակական մեր կյանքը, նրա հիմքերն ու ակնկալիքները՝ տեսնելու բարոյական բարձր արժեքների՝ արդարության և ճշմարտության, մարդասիրության հաղթանակը: Հանրապետության նոր դատավորների երդման այս արարողությունը մեր աներկբա հավատի դրսևորումն է հայրենի մեր պետականության կերտման և նրա առաջընթացի հանդեպ, նաև արտահայտությունն է մեր վստահության՝ ամբողջական պատրաստակամությամբ կրելու ազատ և ինքնիշխան մեր պետականության ողջ պատասխանատվությունը:

Բոլոր ժամանակներում մարդիկ օրենքներ են մշակել՝ կարգավորելու համար հասարակական կյանքը: Ինչպիսին էլ լինեն այդ օրենքները, սովորույթով թելադրված թե օրենսգետների կողմից մշակված, դատավորը մշտապես ավելին է, քան օրենքը, որովհետև նա օրենքի կրողն է ու այն կյանքի կոչողը:

Դատական իշխանությունը հասարակական կյանքի տրոփող զարկերակն է՝ կոչված կենարար արյուն և ավիշ մղելու հատկապես այնտեղ, ուր վնասված, խեղաթյուրված կամ ոտնահարված են ճշմարտությունը, արդարությունը և իրավունքը, այնտեղ, ուր վտանգված է մարդը՝ իր բարոյականով ու կենսական շահերով: Արդարն, դատավորը արդարության առաքյալն է, սպասավորն ու իշխանավորը, և հարկ է, որ օրենսգետ լինի, բայց ոչ միայն, քանզի օրենքը բարին հաստատելու համար է: Ուր Բարին է, այնտեղ Աստված է Իր օրհնությամբ, շնորհների ու պարգևների առատաձեռն բաշխումով:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Ամենախնամ Բարձրյալը զորակից լինի մեր դատավորներին, շնորհազարդի Սուրբ Հոգու իմաստությամբ, որպեսզի նրանց հանապազ ջանքերով օրենքը դրսևորվի իր սիրո մեջ և անգութ չդառնա իր պատիժներով: Որպեսզի համամարդկային բարոյական արժեքների՝ Աստվածադիր օրենքների կենսագործմամբ դատավորն արժևորի իր երկրի օրենքը և ծառայի իր վեհ առաքելությանը, և օրենքը իրավունքը պաշտպանի՝ ի շինություն ազգային հասարակական մեր կյանքի, ի զորացում անկախ մեր պետականության և ի բարօրություն մեր ժողովրդի:

Կրկին հոչակենք սաղմոսերգուի խոսքը՝ «ուր ողորմածությունն ու ճշմարտությունն են հանդիպում, այնտեղ արդարությունն ու խաղաղությունն են համբուրվում»:

Ավարտվեց երդման հանդիսավոր արարողությունը: Այսօր արդեն 123 երդվյալ դատավորներ վճռում են մեղադրյալի աթոռին հայտնվող հանրապետության քաղաքացիների բախտը: Տա Աստված, որ Սուրբ Գրքի վրա չերդված, սակայն արդարության պահպանմանը կոչված դատավորները բոլոր իրավիճակներում էլ հնարավորինս հավատարիմ մնան Աստվածային պատվիրաններին, Սուրբ Գրքի հորդորներին ու պատգամ-խորհուրդներին...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ